



Grant Thornton

**Գրասր Թորնթոն ՓԲԸ**

ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964  
Ֆ. +374 10 260 961

**Grant Thornton CJSC**

8/1 Vagharshyan Str.  
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964  
F +374 10 260 961

[www.gta.am](http://www.gta.am)

## Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱԳԲԱ ԼԻՁԻՆԳ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի բաժնետերերին և խորհրդին.

Մենք ստուգել ենք «ԱԳԲԱ ԼԻՁԻՆԳ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ -ի՝ (այսուհետ «Կազմակերպություն») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Կազմակերպության՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Կազմակերպության ղեկավարությունը պա տասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Կազմակերպության 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, և 2011թ. փետրվարի 08 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Կազմակերպության ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուդադյան  
Տնօրեն/բաժնետեր



Արեն Աղաջանյան  
Աուդիտոր

08 փետրվարի, 2011թ.  
ք. Երևան